ԿՈՄԻՏԱՍ-ՄԱՐԳԱՐԻՏ ԲԱԲԱՅԱՆ. ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Posted on October 6, 2024 by Keghart

Category: Opinions

Նառա Դանիելյան, Երևան, 29 Սեպտեմբեր 2024

Դու Ամենայն Հայոց երգի Վեհափառն ես,
Դու՝ մեր երգի Մեսրոպ Մաշտոց,
Գիրն ու տառն ես Հայոց երգի:
Հայոց երգի
Անծիր հերկի:
Ե՛վ ակոսն ու խորունկ առն ես,
Ե՛վ մատնընտիր սերմը նրա,
Ե՛վ խոստումը գալիք բերքի...
Պարույր Սևակ

Կոմիտաս Վարդապետի (Սողոմոն Սողոմոնյան) ծննդյան օրը՝ սեպտեմբերի 26-ին, նրա անունը կրող թանգարան-ինստիտուտում բացվեց «Փարիզյան հանդիպումներ» խորագիրը կրող ժամանակավոր ցուցադրությունը: Դա ներկայացնում է Կոմիտասի փարիզյան կյանքի գողտրիկ հատված՝ հարաբերությունները մտերիմ բարեկամուհու՝ Մարգարիտ Բաբայանի հետ: Միջոցառման համադրող Մարինե Հարոյանը 110 տարի անց մեկ հարկի տակ մեկտեղել է երկու մտերիմ մարդկանց՝ դաշնակահարուհի, երգչուհի, երաժշտագետ, մանկավարժ Մարգարիտ Բաբայանի 150 և երաժշտագետ-բանահավաք, երգահան, երգիչ, խմբավար, մանկավարժ, հայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Կոմիտաս Վարդապետի ծննդյան 155-ամյակները: «Երբ ուսումնասիրում ես Բաբայանի կենսագրությունը, զարմանում ես, թե ինքը իր ժամանակին ինչպիսի մեծ վաստակ է ունեցել թե՛ որպես կատարող երգչուհի, թե՛ որպես մարդ, որը հանրահռչակել է հայ երգն ու երաժշտությունը միջազգային հարթակներում»,– ասում է տիկին Հարոյանը:

«Փարիզյան հանդիպումներ» ցուցադրությունը իրականացվել է Կոմիտասի թանգարան-ինստիտուտի և Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի համագործակցությամբ: Ներկայացված են շուրջ 150 արխիվային փաստաթղթեր, լուսանկարներ, վավերագրեր, կտավներ Հայաստանի ազգային պատկերասրահից, ինչպես նաև ֆրանսիացի Լալուա ընտանիքի արխիվային փաստաթղթեր: Ցուցադրության տարբեր բաժիններ նվիրված են Մարգարիտ Բաբայանի գործունեության տարբեր ոլորտներին՝ ներկայացնելով Բաբայանի և Կոմիտաս Վարդապետի մտերմությունը նամակագրության միջոցով:

ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ: 26 Սեպտեմբեր 2024 Ցուցադրության բացում Կոմիտասի թանգարանում

Բաբայանների ընտանիքը մեծ դեր է կատարել Կոմիտասի կյանքում, հատկապես նրա փարիզյան գործունեության շրջանում:

Իսկ ինչո՞ւ է ցուցադրությունը կոչվում հենց «Փարիզյան հանդիպումներ»: Մանրամասնում է տիկին Հարոյանը. «Անցյալ դարի սկզբին Փարիզն համաշխարհային մշակութային կենտրոն էր արդեն և այնտեղ էին ձգտում բոլոր արվեստագետները: Ովքեր ուզում էին կայանալ որպես արվեստագետ պետք է նախևառաջ հաղթահարեին փարիզյան փորձաքննությունը»:

Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տնօրեն Նիկոլայ Կոստանդյանն ընդգծում է. «Փարիզը Կոմիտասի համար շրջադարձային և շատ կարևոր վայր էր, հետևաբար Կոմիտասի 155-ամյակի միջոցառումների շրջանակում անհրաժեշտ էր արտացոլել փարիզյան այդ շփումները: Դա կգնահատի Կոմիտասի ժառանգությունը արժևորող այցելուն»:

Կոմիտասի արխիվն ունենալու համար պարտական ենք հիմնականում երկու մտավորական-արվեստագետների՝ հենց Մարգարիտ Բաբայանին, ինչպես նաև Արշակ Չոպանյանին:

ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ: 26 Սեպտեմբեր 2024 Ցուցադրության բացում Կոմիտասի թանգարանում

Կոմիտասի ժառանգությունն ամբարած թանգարան-ինստիտուտը ոչ միայն պահպանողն է, այլև տարածողն է մեր երկրորդ լեզվի՝ մեր երգի այբուբենի:

Ցուցադրության բացմանը նախորդել էր Կոմիտասի անվան զբոսայգում հայոց մեծաց պանթեոն այցելությունը: Պետական պաշտոնատարներ, մի խումբ մտավորականներ և Կոմիտասի թանգարան-ինստիտուտի աշխատակազմը ծաղիկներ էին խոնարհել Վարդապետի շիրմին, կատարվել էր հոգեհանգստյան կարգ:

«Կոմիտաս Վարդապետը, որ քաջութիւնն ունեցաւ գալ խմբերգը ղեկավարելու եւ ինքն իսկ մելոտիներ երգելու, **Տիրամայր**ին մէջ բարձրացաւ յուզմունքի այնպիսի ներուժութեան մը, որ գրեթէ արցունք բերելու աստիճանին կը հասնէր եւ որուն համար հասարակութիւնը «օվասիոն» մը ըրաւ իրեն: Ոչինչ աւելի սրտաշարժ էր քան տեսնել հասարակութեան ծափերուն առջեւ իր խոնարհիլը՝ քաղցրութեամբ ու վեհութեամբ՝ սեւ, բարձր վեղարին տակ»,– իր հուշերում գրում է ֆրանսիացի երաժշտագետ Լուի Լալուան:

Կոմիտասն է վավերացրել հայ երաժշտության ինքնության վկայական- անձնագիրը: Այն հազար տարի հետո էլ մեր կարոտն ու մորմոքը, երգի վերածված, աշխարհներին կտանեն ու կմնան մշտահունչ ու մշտարթուն, իբրև երբեք չընդհատվող անլռելի զանգակատուն:

*****

There are no comments yet.